

ՄՈՎՍԵՍԻ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»
ԼԵՋԱԻ ՀՈՒՆԱՔԱՆ ՇԵՐՏԸ

Գ. Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայագիտության մեջ ընդունված է խոսել Մովսես Խորենացու լեզվին հատուկ հունարանության մասին¹։ Սովորաբար չի բացատրվում, թե ինչ պիտի է հասկանալ «հունարենի ազդեցություն» ասելիս։ Կարելի է կռահել, որ ենթադրվում է մի այնպիսի իրավիճակ, երբ Խորենացին, իր «Պատմություն»-ը շարադրելիս, անհրաժեշտ դեպքում պատճենել է իրեն հայտնի հունարեն լրաց կամ ածանցավոր բառեր և կիրառել դրանք իր բնագրում։ Սակայն Խորենացու բառապաշարի մեր ուսումնասիրությունը բերում է մեզ մի բոլորովին այլ եզրակացության։

Նայա ճշգրտենք «հունարան կազմություն» արտահայտության մեր ըմբռնումը։ Երբեմն այն սահմանափակում են հունաբան դպրոցի թարգմանությունների ամենատիպիկ տարբերակիչ հատկանիշը համարվող նախածանցավոր բառերով²։ Շփոթի հիմքում, մեր կարծիքով, երկու դեպքում էլ նույն «հունարան» տերմինի կիրառությունն է և յուրաքանչյուր կիրառությունը հատուկ իմաստային երանգի անտեսումը։ «Հունարան դպրոց» ասելիս պիտի է հասկանալ «հունաոճ, հունամետ» դպրոց (հմմ. hellenizing school, école hellénophile, грекофильская школа), իսկ «հունարանությունը» հունարենի կաղապարով ստեղծված նոր բառ (ինչպես նախածանցավոր, այնպես էլ բարդ, վերջածանցավոր, ժխտական մասնիկով, իմաստային պատճենում են), շարահյուսական դարձվածք կամ արտահայտություն է։ Առաջին հունարանությունները՝ մեծ մասամբ բառային, հանդիպում են արդեն ամենավաղ ոսկեդարյան կամ մեսրոպյան թարգմանություններում, սակայն մեծ քանակ չեն կազմում և սովորաբար իրենցից ներկայացնում են տեխնիկական տերմինների կամ բանաստեղծական լեզվին հատուկ բառերի թարգմանություն (հիմնականում՝ բարդ բառեր)³։ Հենց Աստվածաշնչում էլ դիտվել են միայն շտրահյուսական հունարանության դեպքեր⁴։ Վերջիններս շատ ավելի լայն տարածում են գտնում դասական թարգմանությունների այսպես

¹ Վ. Առաքելյան. Խորենացու լեզուն և ոճը.— «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 2, էջ 105—120։ Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար). Երևան, 1981, էջ 174—190։

² Օրինակ, նույն Վ. Առաքելյանը գրում է. «Հունարանական կազմությունները այնպիսի մեծ քանակ չեն կազմում, որ կարող է մի պահ թվալ...» և անմիջապես բերում նախածանցավոր բառերի ցուցակը (նույն տեղում, էջ 108)։ Ստ. Մալխասյանցը «Հայոց պատմության» աշխարհարար թարգմանության ներածության մեջ (Երևան, 1968, էջ 37) գրում է. «Նրա լեզվում նկատվում են հունարան հայերենի որոշ առանձնահատկություններ։ Դրանք արտահայտվում են հունական կաղապարով, նախդիրներով բառեր ստեղծելու մեջ, ինչպես՝ արտասանություն, առարկություն, արտասահմանել, պարածածկել, ներքողական, վերաբանություն, աշխարհագրություն, հարցասիրություն և այլ շատ բառեր»։ Նկատենք, որ վերջին երկուսը նախածանցավոր բառեր չեն։

³ E. Benveniste. Le développement des mots composés en arménien classique.— REA, nouvelle série, t. IV, p. 10—11.

⁴ G. Bolognesi. Nuovi aspetti dell' influsso iranico in Armeno.— «Հանդես մամուրյա» (ՀԱ), 1931, 10—12, էջ 682—683.

կոչված «հետմեսրոպյան» շերտում՝ Գրիգոր Նազիազացու և Բարսեղ Կեսարացու բնագրերում⁵, որոնցում աճում է և բառային պատճենումների թիվը, ինչպես նաև ի հայտ են գալիս սահմանափակ թվով նախածանցավոր հոնաբանություններ» (որոնց հատուկ կենտ դեպքեր կան արդեն ոսկեդարյան թարգմանություններում)։ Ինչ վերաբերում է հունարան թարգմանություններին, որոնք իրենցից ներկայացնում են հիմնականում ոչ այնքան աստվածաբանական, որքան մեծ քանակությամբ տերմիններ պարունակող գիտական աշխատություններ, ապա գրանցում արդեն կանոն էր դարձել հունարեն բնագրի բառերն ու շարահյուսությունը հնարավորին չափ ճշգրիտ պատճենելը և նույնիսկ արհեստական քերականական ձևեր ստեղծելը։ այստեղ էլ անհրաժեշտություն ծագեց մեծ թվով նախածանցավոր բառեր⁶ ստեղծելու, որոնք, սակայն, հունաբանությունների ընդհանուր բազմության միայն մեկ շերտն են կազմում (նորաբանությունների մեծ մասն իրականում բարդ բառեր են)։

Նորաստեղծ բառերը, ինչպես և շարահյուսական դարձվածքները, այս կամ այն չափով մտան հայ հեղինակների ինքնուրույն երկերի մեջ՝ յուրաքանչյուրի նախասիրության ու լեզվական ճաշակի համապատասխան։

Օվ հիմն ծագման տեսանկյունից դասական (ինչպես մեսրոպյան, այնպես էլ հետմեսրոպյան) և հունարան թարգմանություններում պատճենված բառերի միջև սկզբունքային տարբերություն չկա, ապա կիրառության, ոճական արժեքի տեսանկյունից կարելի է խոսել այդպիսի տարբերության մասին։ Օրին, ասենք, *հոգեմտացու բնագրում* առկա *սերկայամիտ», «մայրաքաղաք», «մարդասիրեմ»* և նման բառերը վկայված էին արդեն Աստվածաշնչում և, հետևաբար, բազմաթիվ այլ բառերի թվում գրականության մեջ կիրառվող սովորական բառեր էին, իսկ մերօրյա բանասերը հատուկ ջանքեր պետք է գործադրի դրանց «հունաբանությունն» ապացուցելու համար, ապա ահպիսի հունարան թարգմանությունից, ինչպես, օրինակ, Փիլոն Աղեքսանդրացու երկերն են, վերցրած բառերը (օրինակ, «ախտասէր», «արփայագնա՞ լինել», «բազմաշրջութիւն», «հիւքնահաճ», «կնամարդի», «քաջամտացեալ ևն. գիտակցաբար շրջանցում ենք նախածանցավոր բառերը» որոշակի «հունաբան» երանգ էին հաղորդում «Հայոց պատմության» բնագրի լեզվին։ Շարունակելով «հունաբան» տերմինի մասին վերը շարադրված մեր դատողությունը, կարելի է ավելացնել, որ «հունաբանությունը» ա) հունարենի կաղապարով ստեղծված լեզվական միավոր է և բ) այդպիսի միավորներով հագեցած լեզվի ոճական նկարագիր։

⁵ G. Lafontaine B. Couille. La version armenienne des discours de Grégoire de Nazianze Louvain, 1933, p. 137 (Corpus Scriptorum Christianorum Orientalium, v. 416); G. Uluhoglian. Tecnica della traduzione, particolarità lessicale, calcoli sintattici della traduzione armena dell' Asceticon di Sancto Basilio.—ՃԱ՝ 1975, 10—12, էջ 406—422. Ի դեպ, այդ երկու հեղինակների հայերեն բնագրերն ընթերցելիս մենք այն տպավորություն ենք ստացել, որ դրանք իրականացված են միևնույն թարգմանչի ձեռքով։

⁶ Նախածանցներն իրենց հունարեն համարժեքներով տե՛ս Н. Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи. Пг., 1915, с. CLXXXIV—CLXXXV; Հր. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. II մաս, Երևան, 1951, էջ 143—144; Ըստ Գ. Զահուկյանի, այդ նախածանցները կամ «արհեստական կառուցումներ են», կամ էլ հայերենում հատկապես բարբառներում հանդիպող այնպիսի նախածանցներ, որոնց «մասսայական կիրառություն է տրված» (տե՛ս նրա՝ Քերականական ու ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում. Երևան, 1954, էջ 47)։ Այդ միտքը զարգացրել է Ա. Մուրադյանը՝ Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում (Երևան, 1971, էջ 136—150) գրքում և փորձել բացատրել յուրաքանչյուր նախածանցի ծագումը։

նվ՝ այսպես, վերադառնանք Խորենացու «Պատմության» բառապաշարին. պարզվում է, որ նա ոչ թե ինքն է հունարենի օրինակով հորինել նոր բառեր, այլ մեծ մասամբ օգտագործել է արդեն լեզվում առկա՝ դասական ու հունարան թարգմանություններում կերտված հունարանություններ, ինչպես նոր բառեր, այնպես էլ շարահյուսական դարձվածքներ⁷։ Իսկ գրարարի կենդանի զգացողությամբ օժտված հետազոտողների կողմից հիշատակվող «հունարենի ազդեցությունը» բացատրվում է հունարան, մասամբ էլ հետմևսրոպայան թագմանություններից եկող բառերի ու դարձվածքների կիրառությամբ։

Մի կողմ թողնելով բառերի ոճական գնահատումը, դիմենք դրանց կերտման հանդիմանություններին։ Օգտվելով «նոր Հայկազյան բառարանի» ընձևած տվյալներից, ընդհանուր գծերով հետևելով թարգմանությունների ժամանակագրական այն դասակարգմանը, որն առաջարկված է Ս. Արևշատյանի կողմից⁸, իսկ մի շարք թարգմանությունների դեպքում (Գրիգոր Նազիանզացու և Լուրսեղ Կեսարացու՝ Կ. Մուրադյանի կողմից հրատարակված, ինչպես նաև հրատարակության պատրաստված և ձեռագիր վիճակում սիրահոփար կերպով մեղ տրամադրված որոշ ճառեր, Աղևսանդրի վարք, Դիոնիսիոս Թրակացու Քերականություն, Պիտոյից գիրք, Փիլոն Առեքսանդրացու և Իրենեոսի երկեր), օգտվելով բուն բնագրերից ու դրանց հունարեն սկզբնագրերից (այն դեպքում, երբ վերջիններս պահպանվել են), մենք ստանում ենք հետևյալ պատկերը Խորենացու «Պատմության» բնագրում կան ոսկեդարյան թարգմանություններում կերտված հունարանություններ՝ 98 բառ⁹ (տե՛ս հավելված 1), համեմատյալ թարգմանություններում վկայված 112 հունարանություն (հավելված 2), հունարան թարգմանություններում վկայված 87 հունարանություն (հավելված 3)։ Ինչ չեղբերում է Վ. Առաքելյանի վերջ հիշատակված հոդվածում բերվող նոր բառերի ցուցակներին, նշենք, որ, օրինակ, նրա կողմից «հեղինակային կազմություն» հորջորջվող 35 նախածանցյալովոր բառերից 32-ը կարելի է գտնել մեր ցուցակներում (իսկ «բաղադրել» բառը չի կարելի դիտել նախածանցավորների շարքում), կամ «մարդու բնավորությունը, հոգեկան կյանքը, ապրումներն ու ներքին դրսևորումները բացահայտող» 29 բառից՝ 20-ը՝ Մոտ 100 բառի համար է միայն, որ մեղ չի հաջողվել վկայություններ գտնել մեզ ծանոթ թարգմանություններում (տե՛ս հավելված 4)։ ահա դրանց մի մասը, հավանաբար, իրոք հեղինակային կազմություններ են, այն մասը, որի համար իրենց բացահայտմանը, հրատարակմանը, ինչու չէ, և ուշագիշտ ընթերցմանը սպասող թարգմանական բնագրե-

⁷ Վերջիններիս մասին տե՛ս ստորև։

⁸ Այն կարևոր տարբերությամբ, որ դասական թարգմանությունների ներսում նրա մոտ տարանջատված չեն «մեքսոպյան» (կամ բուն ոսկեդարյան) և «հետմեքսոպյան» (կամ «նախահունարան»՝ բոս (աֆոնտենի և Կուլիի) թարգմանությունները. տե՛ս С. С. Арешатян. Формирование философской науки в древней Армении (V—VI вв.). Ереван, 1973. էջ 37—39՝ դասական թարգմանությունների ցուցակ, էջ 186—188՝ հունական թարգմանությունների ցուցակ։ Ի վերջ, որոշ թարգմանությունների՝ այս կամ այն շրջանին վերագրելը չափազանց մոտավոր է և կարող է ժամանակի ընթացքում ճշգրտվել, քանի որ դրանցից շատերը բավարար չափով ուսումնասիրված չեն։

⁹ Մեր կողմից բերվող բոլոր լիվերը խիստ պայմանական են, կարելի է վիճել այս կամ այն բառը տվյալ ցուցակում գիտելու արդարացիության շուրջ, ժամանակն անկասկած ստիպելու է նոր հայտնաբերվելիք, հրատարակվելիք, ինչպես և գիտությունը հայտնի, սակայն բավարար կերպով չուսումնասիրված բնագրերի մանրակրկիտ քննության հիման վրա ճշգրտումներ մտցնել մեր կազմած ցուցակների մեջ, մանավանդ որ դեռևս բացահայտված չեն Խորենացու բնագրի բոլոր ընդմիջարկությունները։ Այնուամենայնիվ մենք համոզված ենք, որ այդօրինակ սրբագրումները վերաբերելու են առանձին բառերի, իսկ պատկերն ընդհանուր գծերով նույնն է մնալու։

րում վկայություններ չեն հայտնաբերվելու, և որոնք պարունակող հատվածն ընդմիջարկություն չի համարվելու: Ասե՛ք, օրինակ, «բարձրաթոնություն», «ուղղախօսել» կամ «փոխանակաբանեմ» բառերի ետևում կարող ենք տեսնել հունարեն ὑπερφύσους «ամբարտավան, գոռոզ», ὁρθόε «ճիշտ արտասանել» և ὁμοῦσος «հակաճառել, վիճել» բառերը և ասել. «Ահա հորենացին բառեր է կերտել հունարենի նմանակությամբ», ինչը բացառված չէ, սակայն նույնքան հավանական է մեղ թվում և մյուս հնարավորությունը՝ որ դրանց թարգմանական վկայությունները մեզ հայտնի չեն կամ չեն պահպանվել¹⁰, Հնարավոր է նաև, որ այդ բառերը որոշակի նեղ շրջանակներում խոսակցական լեզվի փաստ կարող էին լինել, ինչն առավել վստահությամբ կարելի է պնդել այնպիսի բառի համար, ինչպես «ինքնազուլխ» (եպիսկոպոս), որի իրական եկեղեցական կառուցվածքին վերաբերող տերմին է:

Կան և այնպիսի դեպքեր, երբ կարող ենք ենթադրել. թե հորենացին բառեր է կերտել իր իսկ օգտագործած հունաբանությունների նմանակությամբ. օրինակ, «աթոռակալ»՝ հմմտ. «աշխարհակալ», «աշտարակաշինություն»՝ հմմտ. «աշտարակադործություն». «բաղմաբարբառ», «բաղմարնակ», «բաղմուխողխող», «բաղմամետաքս», «բաղմարունետ», «բաղմուփայլ»՝ հմմտ. «բաղմաբեր», «բաղմամարդություն», «բաղմաշողություն», «բաղմասեր», «բաղմօրինակ». «բարեդնաց»՝ հմմտ. «բարեբխտ», «բարեդործ». «դժուարահալաք», «դժուարամուտ»՝ հմմտ. «դժուարաբուժելի», «դժուարաշարժ», «դժուարարձակ». «զուգագեղեցիկ», «զուգահայր»՝ հմմտ. «զուգահալասար». «ընդդիմափառ»՝ հմմտ. «ընդդիմաբանել», «ընդդիմամարտ». «յուրվածեռն»՝ հմմտ. «բաղմածեռն». «ուսումնատեսաց»՝ հմմտ. «ուսումնասէր» ևն:

Հունաբանությունների լրիվ պատկերը ներկայացնելու համար անհրաժեշտ է բերել նաև հունարենի կաղապարով կազմված շարահյուսական դարձվածքները: Մի քանիսը թվարկել է Ստ. Մալխասյանցը հորենացու աշխարհաբար թարգմանության ներածության մեջ. ա) «հայցական հոլովով ենթակառանորդ դերբայի հետ». «Միրելի էր ինձ... առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել», «Եվ ասէին գոգցես երկրին Հայկազանց զայս լինել», բ) «երկրորդական նախադասությունը հարաբերական դերանվան հետ գլխավորից առաջ դնել և հարաբերյալի հոլովը համաձայնեցնել հարաբերականի հոլովի հետ». «Զինչ ինձ ի գիրս յայս արդեօք իցէ բան սիրելի քան թէ որ յաղագս սորա էին գովեստք և պատմությունք յերկարել»: «Անմահ յիշատակ թողուլ զայս քեզ և որ զկնի քո գալոց են ազգք», գ) «երկրորդական նախադասությունների տեսակ-տեսակ կրճատումներ»՝ համաձայն հունարենի ոգուն. «Իսկ մեքոցն ոչ այսպիսի ինչ խորհելոցն՝ մնացին յիշատակեալ ի վերջինսն»: «Եվ զայսոցիկ այսպէս կարգելոցն՝ սկսայց և որ ինչ զկնի այսոցիկ». «Զայսօրիկ զսկզբնատիպն ասիս ուրախացուցանել», դ) «հայցական սեռի խնդիրներ»՝ կրավորական բայերի հետ. «Ի շահատակելն իւրում հարկանի յումեմնէ սակերբ զգլուխն», «Ի զվասնէրն ի խորհրդակցացն հարցանիլ յերկարէ ժամս ինչ զպատասխանիսն» ե) «անցյալ դերբայը իբրև որոշիչ գործածելն այնտեղ, որտեղ սպասելու էր անորոշ դերբայ իբրև ասացված». «Ի մտելոց անուանց նոցա ի քարտէս արքունի», «Յոչ գտելոց շտեմարանաց յարեալ զօրքն ի վերայ», զ) «քերականորեն իրար հետ կապակցված բառերը՝ որոշիչ և որոշյալ, հատկացուցիչ և հատկացյալ, բայ և մակբայ, իրարից բաժան-

¹⁰ Օրինակ, Մոֆոկլեսի բառարանում (E. A. Sophocles. Greek Lexicon of the Roman and Byzantine Periods from B. C. 146 to A. D. 1100. vol. II, New York, 1900 p. 1115) ὑπερφύσους բառի համար բերվող Greg. Naz. III, 1255 վկայությունը «ախողում է մեզ ենթադրել, որ Գրիգոր Նազիանզացու շրատարակված բնագրերում կարող է առկա լինել «բարձրաթոն» բառը:

վում են միջանկյալ բառերով. «զանդու հոգւոյն ի վերայ իմացուածոց քոց զշարժմունսս», ի քաջէն զրկեալ հովուէ և հովուակցէ» ևն¹¹:

Վ. Առաքելյանը, թվարկելով Մալխասյանցի նշած առանձնահատկությունները, լրացրել է դրանք իր օրինակներով և ավելացրել ևս մի քանիսը. ա) «ուղղական հոլովով ենթական անորոշ դերբայի հետ» (սակայն հմմտ. Մալխ. դ). «զայսորիկ զսկզբնատիպն ասիս ուրախացուցանել» (1. 1), «Եւ մէք յընթևոնու զառ ի նոցանէ շարածս բանից, ըստ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասիմք», բ) «անորոշ դերբայի օրինակով հայցական և ուղղական հոլովով հնթակաների կիրառությունը». «Ի սոցանէ ասեն լեալ զնահապետութիւնս Մանաւղեան... որք աստ ուրեմն յետ սրբոյն Տրդատայ բարձեալ ասին ի միմեանց պատերազմաւն», «և ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազդին Խոռխոռունեաց», գ) «սեռական հոլովով դրված ենթական ասցյալ դերբայով դրված ստորոգյալը փոխում է սեռական հոլովի» (հմմտ. Մալխ. գ). «Եւ հօր կոուոյ եղելոյ՝ զբաղումս ի Պարսիցն սպանանիւ», «Եւ հօր մարտի եղելոյ՝ բազումք երկաքանչիւրոց կողմանցն անկան», «որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն...», դ) «բացառական հոլովով ենթական անորոշ դերբայի հետ», սակայն իրականում հոսնաբնում նմանօրինակ դարձվածք չկա, և այն կարելի է բացատրել որպէս հունարեն հայցականն անորոշ դերբայի հետ դարձվածքի համարժեք՝ կիսապատճենված-կիսահայացված ձևով, ե) «նամակաների սկզբում գործածվող կաղապարային ողջութիւնի բանաձևը»¹², սակայն այն չի վերաբերում բուն շարահյուսությանը:

Նշված առանձնահատկություններից մի քանիսը կարելի է գտնել, օրինակ, Փիլոնի թարգմանություններում.

ա) *genetivus absolutus* (տե՛ս Մալխ. գ, Առաք. գ). «Տէրունեան օրինաց՝ ի հինդ գիրս վերագրեցելոց, առաջինն կոչի և մակազրի լինելութիւն» (իմաստ. 33).

բ) *accusativus cum infinitivo* (Մալխ. ա). «զօրէնսն ըստ կարգաւորին հարկաւոր էր քննիլ և խուզիլ» (իմաստ. 33).

գ) *nominativus cum infinitivo* (Մալխ. գ, և Առաք. ա). «ըստ որում մայր ամենայնի թուի գոյ» (իմաստ. 6).

դ) կապակցված բառերի տարանջատումը (Մալխ. գ.). «զայլսն ի վերայ շինեն զառաքինութիւնսն» (իմաստ. 15).

«Պիտոյից գրքի» թարգմանական հատվածներում.

ե) *attractio casuum*. «Եւ ասացեալ է այսպէս յորոց եկաց կենցաղսյս օգտակարագոյնն» (I). «Քանզի որ սեղանակապտին է բան ոչ միումն յարմարի և միուսումն՝ ոչ, այլ նմանապէս որք զնոյնս յանցանեն պատշաճի» (IV).

Նշված առանձնահատկություններին ավելացնենք.

ա) «երկաքանչիւր» դերանվան կիրառությունը, որ վկայված է Փիլոնի և Իրենեոսի երկերի թարգմանություններում (Փիլ. ստեպ, Իրեն. հերձ. 39, 85 ևն)՝ հուն. *ἐκαστος* «ե՛ մեկը և՛ մյուսը» դերանվան դիմաց, այն *ἐκαστος*.

¹¹ Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց. Երևան, 1968, էջ 37: Հունարեն համադասարան դարձվածքները դրականության մեջ ընդունված է անվանել՝ *accusativus cum infinitivo* (=), *attractio casuum* (բ), *genetivus absolutus* և *nominativus cum infinitivo* (գ), *accusativus grecus* (դ), *participium conjunctum* (է):

¹² Վ. Առաքելյան. Նշվ. աշխ., էջ 114—115. դարձյալ բերենք հունարեն դարձվածքների ընդունված անվանումները. *nominativus cum infinitivo* (ա), *participium conjunctum* (բ), *genetivus absolutus* (գ):

«յուրաքանչիւր»-ի հետ շփոթելու համար¹³, իսկ «Պիտոյից գրքի» թարգմանական հատվածում (I)¹⁴ աբօւտօւց ճերկուսից մեկը» բառի դիմաց.

բ) «աւցեալ գնաց» (2.80), «աւցեալ նստի» (3.62) կապակցութեան կիրառութիւնը, որը հանդիպում է Փիլոնի թարգմանութիւններում՝ հունարենն յիշակ արտահայտող բայերի դիմաց. «աւցեալ նստի» (տեսական 14—IX. 130. *ἵσταται*.), «աւցեալ կայ» (իմաստ. 39—VI. 16. *ἵσταται*.), «աւցեալ գնաց» (իմաստ. 77—VI. 36. *ἵσταται*.), «աւցեալ գնացեալ» (իմաստ. 77—VI. 84. *ἵσταται*.) հմմտ. նաև Իրեն. հերձ. 100. «աւցեալ գնաց», նմանօրինակ կապակցութիւնը, սակայն, բազմաթիւ այլ բայերի ընդգրկումով բազմիցս հանդիպում է նաև «Պիտոյից գրքի» ոչ թարգմանական մասերում, ինչը նույնպես բացատրվում է Փիլոնի թարգմանութիւնների ազդեցութեամբ.

գ) գ- նախդրի՝ հունարեն հոգի դիմաց կիրառութիւնը, և մասնավորապես, որն էլ այլ նախդրի հետ նրա միաձուլ հանդես գալը, ինչը համապատասխանում է հունարեն հոգի օգնութեամբ գոյականացված այլևայլ նախդրավոր կապակցութիւններին. «զառ ի նոցանէ շարածս բանից», «զվասն նոցա կշտամբութեան յարմարել զբանս» (1.3), «զառ ի մէնջ հաւատարմացեալս» (1.4). նույնպես բազմիցս վկայված է Փիլոնի թարգմանութիւններում. «զի բնութեանց կարգ դասու» (իմաստ. 49), «զի նոսայսն զդասս կարգին» (իմաստ. 51), «զվասն ամենայնին մարդկան ազգի քահանայութիւն» (իմաստ. 59), «Պիտոյից գրքի» ոչ թարգմանական մասերում, Իրենեոսի մոտ. «զբոստ մարդոյն զգալուստ» (հերձ. 20), «զառ ի մարդիկ գալուստն» (հերձ. 24). առանձին դեպքեր կան և նախահունարեն թարգմանութիւններում՝ «զառ ի յինէն եղեալ առ քեզ միւրիւրութեան խրատ», «զառ ի նոսա հարկս» (Բրս. ողորմ.):

դ) «Պատմութեան» բնագրում Աղեքսանդրիայի հանրահայտ նկարագրութեան մի հատված (3.62, էջ 344—345) համարյա բառացի քաղած է Փիլոնի «Յաղագս վարուց կենաց տեսականից» ճառից (էջ 12)¹⁴ և նրա մեջ էլ վկայված է երկու առանձնահատկութիւն. օժանդակ բայի «և» արհեստականորեն ստեղծված անորոշ դերբայը (հմմտ. Փիլ. իմաստ. 48, բազն. 202, լին. 2.3, ել. 1.1 Իրեն. հերձ. 39) և «որք ի ծովէն» արտահայտութիւնը («որոնք ծովից են»). հմմտ. Փիլ. տեսական 10. «ընդ յարենէսն մերձաւորս»—IX. 120 *τοῖς ἀφ' αὐτῶν*, իմաստ. 51. «որոց յարենէ են»—VI. 38. *ταῦν ἀφ' αὐτῶν* Պիտ. IV. 3. ա. «ի յարենէն», IX. 4. «ի նոցանէն ապականութիւն», Փիլ. լին. 1. 86. «Եղիա յերկրեցս յերկինս ի վեր հետեւալ», Պիտ. X 1. «յերկրիքս»:

Եվ այսպես, եթե մի կողմ դնենք դասական (ինչպես մեսրոպյան, այնպես էլ հետմեսրոպյան) թարգմանութիւններից նորենացու բնագրի մեջ թափանցած հունարանութիւնները (մեծ մասամբ՝ բառեր), և դիտարկենք միայն հունարան թարգմանութիւններում կերտվածները, ապա կարելի է նկատել, որ ինչպես այդօրինակ նոր բառերի, այնպես էլ շարահյուսական դարձվածքների մեծ մասի համար մեզ հաջողվել է վկայութիւններ գտնել հունարան դպրոցի առաջին շրջանի թարգմանութիւններում (Դիոնիսիոս Թրակացու Քերականութիւն, Փիլոնի, Իրենեոսի երկեր, «Պիտոյից գրք»)։ Նորենացու «Պատմութեան» բնագրում կա միայն տասը հունարանութիւն, որոնց համար վկայութիւնները կարելի է բերել հունարան դպրոցի հետագա շրջաններում իրականացված թարգմանութիւններից. արտաճառում 3.65—Սեղբ. 691, արտափայլում 3.67—Սեղբ. 699, գերապայծառ 2.88—Սեղբ. 715, 720,

¹³ Թրակացու Քերականութեան մեջ (էջ 20—21) ցայտուն երևում է այդ հակադրութիւնը. «Մակրաշի և որ ներկուց կամ յաւելաց ի մին ունիցի վերբերութիւնն որդոն երկաքանչիւր, իւրաքանչիւր»:

¹⁴ Հմմտ. Գ. Халатянц. Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского. Ч. II, М., 1903, с. 130.

արտադրություն 2,70—Սահմ. 18.7—Busse, 7. 17. Եւշոււտօւ, լարահետեմ 3.62—Արիստ. Ստորոգ. 384—պաշտօնօրէն. կենցաղավարութիւն 1.21—Սահմ. 148.18—Busse. 74.7. Նոյն, կիսակտուր 3.39—Սահմ. 76.3—Busse. 33.2. Դիւտօւ, պարածածկեմ 1.24—Էլ. Ստորոգ. 32.21—Busse, El. 125.6. Բարս-ւէքս. ընթերցասէր 1.5—Սոկր. 2. 3. 19—Եւշուտօւ 660, բեմասացութիւն 3.65—Սոկր. 2. 3. 602—պաշտօն 663,

Ի դեպ, «կենցաղավարություն» բարդ բառը հունարեն բնօրէն կլանք պարզ, իսկ «բեմասացություն»-ը՝ բարդացած նախածանցավոր բառի թարգմանությունը լինելով, բառիս խիստ առումով հունարանություն չեն կարող համարվել, ինչպես և «ելուզակ», «գործառնություն», «գրուցատրություն», «իրադրծել», «լայնատարած», «ծաղկաւտ», «ճարտասան», «մասնաւոր», «միջերկրակայ», «շափաբեր», «փորագրեմ» (հավել. 3), «ախորժակ», «գծագրություն», «ղուզահասարակ», «կատակերգություն» (հավել. 2) բառերը, որոնք մենք իսկական հունարանությունների ցուցակների մեջ ենք ընդգրկել միայն վկայությունների բացառիկության նկատառումով։ «Ընթերցասերն» էլ կիրառված է հուն. Եւշուտօւ-ի («ընթերցանություն») դիմաց։ Այնպես որ վերոհիշյալ յոթ կամ տասը բառը այնքան փոքր թիվ են կազմում, որ, մեր կարծիքով, ի հակակշիռ 3-րդ հավելվածում բերվող տասնյակ, ինչու չէ, և 2-րդ հավելվածի՝ էլ ավելի բազմաքանակ բառերի, չեն կարող ապացուցել, որ Խորենացին օգտվել է նաև Սոկրատ Սքոլաստիկոսի «Նկեղեցական պատմությամբ», «Սեղրեհատրոսի վարքի», Արիստոտելի «Ստորագությունների», Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրական»-ի կամ էլ իրանի վերագրված «Սաուրպությունների մեկնության» թարգմանություններից։ Վերջին դեպքի համար Գ. Սարգսյանը ցույց է տվել հակառակ իրողությունը՝ Անհաղթի նշված երկի ու «Պատմության» միջև մի բնագրային զուգահեռ բացատրելիս պարզվում է, որ առաջնայինը Խորենացու բնագրին է¹⁶, ինչ վերաբերում է Սեղրեհատրոսի վարքից քաղած երեք հունարանությանը, ապա այդ երկի հետ Խորենացու «Պատմության» հարաբերությունների պատկերն այնքան բարդ է ու խրթին¹⁷, որ մենք ձեռնպահ ենք մնում որևէ հետևություն անելուց և բավարարվում միայն արձանագրելով այն փաստը, որ երեք վկայություններն էլ Խորենացու բնագրում «Վարքի» հետ առնչվող հանրահայտ գլխի (2.83) մեջ չեն մտնում։

Ի դեպ, վերոհիշյալ յոթ (կամ տասը) հունարանությունները կարող էին նույնպես կերտված լինել ավելի վաղ թարգմանություններում, և այդ վաղ վկայությունները մեզ համար անհայտ լինեին, ճիշտ այնպես, ինչպես մենք ենթադրեցինք ոչ մի (նույնիսկ ուշ) վկայություն չունեցող բառերի (հավել. 4) համար¹⁸։ Ինչևէ, դրանք չափազանց սակավաթիվ են որևէ բան ապացուցելու համար։

¹⁶ Սոկրատ Սքոլաստիկոսի հայերեն տարբերակներն ուսումնասիրող Մ. Շիրինյանը, ճիշտ է, չի ընդունում թարգմանության ավստրիական ՅՅԸ թվականը, համարելով, որ դա համառոտ իմբագրության ստեղծման տարեթիվն է, իսկ թարգմանությունը կատարվել է ավելի վաղ (М. С. Ширинян. Краткая редакция древне-армянского перевода «Церковной истории» Сократа Схоластика.—Византийский Временник, т. 43, 1982, с. 231—241), սակայն քանի որ նա ստույգ չի թվագրում այն, մենք ձեռնպահ ենք մնում դա հունարան դպրոցի առաջին շրջանի գործ համարելուց։

¹⁷ Г. Х. Саркисян. Моисей Хоренский и Давид Непобедимый (Опыт установления источниковедческой связи).—Кавказ и Византия. I. Ереван, 1979, с. 67—72.

¹⁸ Տե՛ս Բ. Սարգսեան. Տեսութիւն Սեղրեհատրոսի պատմութեան և Մ. Խորենացույ աղբերաց. Վենետիկ, 1893, էջ Գ—ԼԹ։

¹⁹ Մեզ կարող են առարկել, ասելով, որ խնդրո առարկա բառերից մի քանիսը թվում են ուշ կերտվածքներ, սակայն դա այդպես չէ. հմտ. «արտադատող», «արտաճառեմ», «արտափայլեմ», «արտասանութիւն», «արտասահմանեմ» (հավել. 3). «գերապայծառ»՝ «դերա-7 Հռոնդեմ», № 1—2

Պետք է նշել, որ հենց «Հունարան» բառապաշարն է Հ. Մանանդյանի համար կովաններից մեկը ծառայել հորենացու՝ IX դարի հեղինակ լինելու վարկածն ապացուցելու համար¹⁹։ Որպես փաստարկ նա բերում է բառերի երեք ցանկ. ա) հետին բառեր, որոնք չեն հանդիպում դասական և Պիտոյից—Փիլոնյան թարգմանություններում (14 բառ), բ) հունարան նախածանցավոր բառեր (40 բառ), գ) թեև ոչ հունարան, բայց հետին բառեր (35 բառ)։ Ուշադիր զննելով այդ ցանկերը՝ կարելի է նկատել, որ որոշ բառեր հանդես են գալիս երկու անգամ տարբեր ցանկերում, մի մասի համար Մանանդյանն ինքը վկայություններ է բերում Պիտոյից—Փիլոնյան և նույնիսկ դասական թարգմանություններից (օրինակ, «արտասանություն», «արտահայտված»), այլ դեպքերում այդպիսի վկայություններ հայտնի են մեզ, սակայն վրիպել են նրա ուշադրությունից («քաղաքական», «ընդդիմակալներ»), իսկ վերջին խմբի բառերը հետին համարելը մեր կարծիքով ոչ առարկայակա՛ն մոտեցման արգյունք է²⁰։

Բացառելով բոլոր այդօրինակ բառերը, մեզ մնում է Հ. Մանանդյանի հետ համաձայնել միայն վերոհիշյալ յոթ կամ տասը բառի դեպքում, սակայն եթե նրա բերած ընդարձակ ցուցակներն իրենց քանակով կարող էին ապացույց լինել, որ հորենացուն չի կարելի V դարի հեղինակ համարել, ապա բառերի փոքրամասնությունը, ինչպես ասացինք՝ ոչ²¹։

Նվազագույնը թարգմանությունները, որոնցից հորենացին մեծ թվով հունարանություններ է քաղել, պատկանում են հունարան դպրոցի առաջին շրջանին։ Վերջինիս ժամանակի մասին էլ միասնական կարծիք չկա հայագիտության մեջ²², սակայն մեր պատկերացմամբ, գոնե Փիլոնի թարգմանությունների, մասամբ և «Պիտոյից գրքի» գրության ժամանակի մասին կասկածները փարատվում են Ղազար Փարպեցու բնագրում դրանցից քաղած հունարանությունների առկայությամբ²³։ հետևաբար դրանք իրոք կարող էին իրագործված լինել V դարի երկրորդ կեսին։

պանծ» (հավել. 3). «պարածակել»՝ «պարայածել» (հավել. 3). «յարահետկիմ»՝ «յարամնամ» (Պիտ., Բրս. սղ. 1—PG. 30. 213. παραμένω). «կիսակուր»՝ «կիսախոր» (հավել. 2)

19 Հ. Մանանդյան. հորենացու առեղծվածի լուծումը. Երևան, 1934, էջ 177—207՝ հավելված. հորենացու պատմության բառապաշարը։

20 Հ. Մանանդյանի նշված ակնարկը խիստ քննադատել է Թ. Ավդալբեկյանը (տե՛ս հորենացու «Պատմության» լեզուն հունարան դպրոցի շրջանների կապակցությամբ.—Թ. Ավդալբեկյան. Հայագիտական հետազոտություններ. Երևան, 1969, էջ 112—131), որը թեև լայնորեն չի օգտագործել թարգմանական երկերի տվյալները, սակայն Մանանդյանի հիշատակած բազմաթիվ բառերի համար վկայություններ է բերել V դարի հեղինակների երկերից, ինչպես նաև Էհնիք հաւատոյ՝ ժողովածուի մեջ մտած թարգմանական հատվածներից, մասնավորապես, մեր կողմից լիցիտարկվող պարզ բառերի համար («շողում», «շալում», «սաղապ», «վսամ», «փարթամ», «սարաս», «կենցաղ»)։

21 Պետք չէ մոռանալ նաև այն հանգամանքը, որ ըստ Հ. Մանանդյանի հունարան ղեկավարի գործունեության առաջին շրջանը տեղագրվում է VI դարի առաջին կեսում. մինչև 552—564 թթ. տե՛ս նրա՝ Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները. Վիեննա, 1938, Հմմտ. նաև Թ. Ավդալբեկյան. Նշվ. աշխ., էջ 131. Այս բառապաշարը մեր կողմից բանասիրական ու ժամանակաբանական ճշգրտումների և ուղղումների ենթարկվելուց հետո՝ մնում է մոտ մի քանի տասնյակ բառ միայն, որոնցից ոչ մեկը լեզվապատմական ու զաղափարական տեսանկյունից հատկանշական չէ ապացուցելու, թե հորենացին V դարի մատենագիր չէ, այլ IX դարի և համոզելու, թե հորենացու առեղծվածը լուծված է նաև բառապաշարի տվյալներով։

22 Հարցի պատմության հանգամանալից շարադրանքը տե՛ս Ա. Մուրադյան. Նշվ. աշխ., էջ 76—111։

23 Գ. Մուրադյան. հորենացու երկու աղբյուրի թվագրման շուրջը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 4, էջ 94—104, Բ դեպ, անհրաժեշտ է նշել, որ այս հոդվածի

Խորամուխ չլինելով Խորենացու «Պատմության» թվագրման բարդ և դեռևս վիճահարույց խնդրի մեջ, կարող ենք պնդել, սակայն, որ նրա բառապաշարը՝ իր հունարանություններով հանդերձ, չի հակասում նրա՝ V դարի վերջի հեղինակ լինելու արժանահամատեղությանը:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Ն Ե Ր

1. ԽՈՐԵՆԱՅՈՒՆՆԵՐ ՈՍԿԵԿԱՐՅԱՆ ԹԱՐԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒԾ ԿՆՐՏՎԱԾ ՀՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ²⁴.

- աղդակից 2.34 — գ. մկ. դ. 10 աստիճան
աղգապետ 2.26 — բ. օրին. լգ. 21. աստիճան աստ. հմմտ. միջին իր աստիճան
թողալից 3.19, 57 — ըսթ. ա. 14. աստիճան աստ. Ածար. 4. Մ. 216
աղբատանոց 3.20 — Ոսկ. ապաշխ., Բրս. ողորմ.
ամենախնամ 1.4 — ըս. քր. ա. (աստիճան?)
ամենաան 3.24 — Ոսկ. մ. ա. 1
այլարանել 2.61, այլարանութիւն 2.70 — Իգն., Նդինիկ (աստիճան?)
անաստուած 3.5, 19 — Նիկիս. բ. 12. աստիճան
անդառնալի 2.8 — Վրք. հ. իս. (աստիճան?)
անկրկոյթ 3.67 — ա. կոր. թ. 26. աստիճան
անխոնարհութիւն 3.2 — ըս. քր. ա, Առ որս, դ. (աստիճան?)
անկատար 3.62 — Իմ. ժ. 7. աստիճան
անկարդ 1.3, 11 — բ. պետ. բ. 7. աստիճան
անհանճար 1.31 — Ոսկ. մաթ. ա. 7. — աստիճան, Ածար. ի բառ. 168—PG 33⁵
509. աստիճան
անձնողորմ 3.62 — Կոր. բ. 11. աստիճան
անձնասէր 1.44 — բ. տիմ. գ. 2. աստիճան, հմմտ. հավել. 3. ինքնասիրութիւն
անսխալ 1.2, 3.1, 49 — Առակ. բ. 28. աստիճան

և մեր ներկա ուսումնասիրության միջև արդեն իսկ առանձին տարաձայնություններ կարելի է գտնել Թորինսկի, «Ժամանակների» բառն այնտեղ տեղադրված է «Պատմության» զրբից Խորենացու բնագրի մեջ անցած բառերի ցուցակի մեջ (էջ 102, հավել. 3), սակայն հետագա պարզաբանությունների արդյունքում մենք նրա համար նոր վկայություն ենք գտել Բարսեղ Կեսարացու ճառերից մեկում (տե՛ս հավել. 2), հետևաբար, «Պատմության» զրբից մեջ նույնպես այն թափանցել է այդ թարգմանությունից: Կան ևս մի քանի նման ճշգրտումներ:

24 Մանթանալով սույն ցանկին, իրանագետ Գառնիկ Ասատրյանը նկատեց, որ մի շարք բառերի համար կարելի է նաև իրանական նախաձև առաջարկել. այսինքն՝ դրանք իրանական փոխառություններ են, պատճենումներ, կամ կիսափոխառություններ—կիսափոխառություն, և բերեց համապատասխան զուգահեռներ. քանի որ իրանական լեզվական ազդեցությունն իրականացել է բանավոր ճանապարհով, իսկ հունականը՝ գրքային, ապա որոշ դեպքերում բերվող կրկու զուգահեռներն էլ իրավազոր են տվյալ բառի նախօրինակ համարվելու: Այլ դեպքերում նախընտրելի է թվում հունարեն կամ իրանական զուգահեռը (վերջինս, օրինակ, «ազգայնաց», կամ «արքայորդի» բառի համար, որոնց հունարեն համապատասխանները ոչ թե մեկ բառ են, այլ բառակապակցություն), սակայն քանի որ վերջնականապես հնարավոր չէ ապացուցել, թե ինչ ճանապարհով է ստեղծվել տվյալ հայերեն բառը, նախագրային շրջանում՝ որպես իրանական ազդեցության արդյունք, թե՛ տվյալ թարգմանությունն իրագործելիս՝ որպես հունարեն բառի պատճենում, մենք նախընտրել ենք բերել երկուսն էլ (ի դեպ, մեր բոլոր ցանկերի «հունարանություններից» որոշ բառեր կարող էին գոյություն ունենալ լեզվում՝ ավանդված չլինելով ավելի վաղ երկերում, և թարգմանության ժամանակ ոչ թե կերտվել, այլ կիրառվել որպես համապատասխան հունարեն բառի համարժեք. այս հարցում էլ որոշակի պայմանափակություն կա):

- անյիշատակելի 2.7. — Իմ. ժդ. 26. անյիշատակութիւն — ἀμνηστία, ժթ. 4. ἀμνηστία
- անսուտ 1.5 — Տիտ. ա. 2. ἀψευδής
- անսպառ 3.62 — Յոր. լգ. 28. ἀπέραντος
- անվաստակ 3.68 — Ոսկ. մ. ա. 13
- անվարժ 1.2 — Սիր. լ. 8. ἀδάμαστος
- անտանելի 3.68 — Ոսկ. (αὐτορρητος?)
- անփառութիւն 3.68 — Ոսկ. (ἀδοξία?)
- անօգուտ 3.68 — Առակ. իե. 20. ἀσύνεργος
- աշխարհակալ 1.5 — Եփես. դ. 12. κοσμοκράτωρ, Ածաբ. 4. Մ. 223, Աղեքս. 365, Հմմտ. միջին իր. *gehan-g'ir, նոր պրսկ. *Jahangir
- աշտարակագործութիւն 1.7 — Եւս. քր. ա. (αὐτοποιεα?)
- աստուածութիւն 2.33 — Կող. 2.9. θεότης
- աստուածակաշտութիւն 1.22, 2.93, 3.68 — Յոր. իր. 28. θεοτάπεινα, Հմմտ. միջին իր. *bag-paristih
- արգարախօսող 1.6 — Վրք. հց. ժա (δικαιολογος?)
- արքայորդի 2.51, 3.53 — դ. թգ. ժա. 12. υἱὸς τοῦ βασιλέως, Հմմտ. միջին իր. *šah zatak
- բաղմամբ 1.16 — Ոսկ., Բրս. առ Գր. (πολύκερπος?)
- բաղմադիմի 2.60, 3.13 — Ոսկ. (πολυπροσωπος?)
- բաղմահմուտ 1.18 — Առակ. ր. 8. πολυειρία
- բանաստեղծ 2.53 — Եւս. քր. ա. (ιογοποιός?)
- բարեգործ 2.85 — Ոսկ. դծ. (εὐεργέτης?) Հմմտ. *širkāta? Հմմտ. նաև բարե-
կամ միջին իր. (արևմտ.) *širkamak (պարսկ. širgamak)
- բարեհամ 1.16 — Ոսկ. դծ.
- բարեպաշտութիւն 3.11 — Սիր. ժա. 17. εὐσεβής,
- բարերար 2.31, 86 — Ղկ. դ. 33. ἀγαθοποιών, Ոսկ. մտթ. ր. 45. εὐεργέτης
- բարեփառութիւն 3.57 — Ոսկ. (εὐδοξία?)
- բարձակից 2.63, 3.17 — Մտթ. ժդ. 33. συνανακείμενος, Հմմտ. միջին իր. *ham-ballīn(ak)
- գաղանամարտիկ 2.87 — Ոսկ. ապաշխ., Ածաբ. 4. Մ. 220. գաղանամարտ — PG. 36.280. κατηγασία, Բրս. սղ. 3.4 — P. 29. 177, քակեցից 3—Բ4. 31.268. θηριομαχος
- դերեկից 2.70 — Հն. ժգ. 7. συναιχμαλῶτος
- դժուարակիր 3.68 — Մտթ. իգ. 4. δυσβάστακτος
- դիւրամուտ 1.32, 3.55 — Ոսկ. հն.
- եղբայրասէր 1.2, 29 — Բ. մկ. ժե. 14. φιλαδέλφους
- երկայնակեաց 2.64 — Եւս. ծգ. 10. μακρόβιος
- երկայնամիտ 2.88 — Եւ. լգ. 6. μακρόθυμος
- երկրագործութիւն 2.59 — ա. մն. է. 26. γεωργέω
- թագակից 1.28, 3.19 — Ոսկ. հն., Հմմտ. միջին իր. *ham-tag?
- ժամանակագիր 1.59, 2.10 — Եւս. քր. (χρονόγραφος?)
- իմաստասէր 3.62, իմաստասիրութիւն 1.2 — Եւս. քր. ք. (φιλόσοφος?)
- ինքնակալ 2.89, 3.15 — Եւս. քր. (αὐτοκράτωρ?)
- ինքնակամ 1.5, 2.8, 3.37 — Բ. մկ. դ. 19. αὐθαιρέτως
- իշխանասիրութիւն 3.64 — իշխանասիրեմ 1.2 — Իգն. (φίλαρχία?)

- խորհրդակից 1.26, 3.43 — Սիր. խր. 22. *ἐκλογιστῶν*. Ածար. ի բան. 181
կորուվարան 1.8 — Ոսկ. բ. կոր.
կոռապաշտ 2.35 — ա. կորնթ. ժ. 7. *ἐκλογιστῶν*. հմմտ. միջին իր. *butparist?
հանապազասուտ 3.3 — տիտ. ա. 12. *ἐκλογιστῶν*
հաւատակցութիւն 3.65 — ՃԲ., Բրս. հց. հաւատակից (*συνεπιστάς*?). հմմտ. մի-
ջին իր. *h'm-dēn(ak)ih
հիւանդանոց 3.20 — Սեբեր.
հոգեմարտ 3.30 — Սեբեր. (*ψυχμαχος*?)
ձեռնակերտ 1.12, 2.48, 3.27, 31 — Ոսկ. (*χειροποιετός*?). հմմտ. միջին իր.
*cl. st-klit
ձեռնադրել 3.57 — Գծ. ժդ. 23. *χειροποιετός*
ճանապարհակցել 3.15 — Ոսկ. (*συνεπιστάς*?). հմմտ. միջին իր. *ham -rah, նոր-
պարսկ. hamrah
մահաբեր 2.23 — Թուոց ժբ. 22. *ἐκλογιστῶν*
մայրաքաղաք 3.49, 57 — Յեսու. ժ. 2. *ἐκλογιστῶν*
մարդասիրել 2.8 — Գծ. իէ. 3. *φιλανθρωπίας*
մեծարանել 2.60 — Սղ. ժդ. 26. *ἐκλογιστῶν*
մեծանշանութիւն 3.3 — Սիր. ի. 28 (*հուն. չիք*)
նոյնանուն 2.8 — Ոսկ. մաթ. (*ὁμώνυμος*?), հմմտ. միջին իր. *ham-nam
շատխօսութիւն 2.92 — Առակ. ժ. 19. *πολυλογία*
ուղեկցեմ 3.8 — Ղկ. բ. 44. *ἐκλογιστῶν*. Ոսկ. մ. լ. է. 61. *ուղեկից* —
συνεπιστάς
պատերազմասէր 1.13, 2.21 — Եւս. քր. ա. (*συνεπιστάς*?). հմմտ. միջին իր.
razm-yoz(ak)
պատմադիր 1.13, պատմագրել 2.70, պատմագրող 3.66 — Եւս քր. (*συνεπιστάς* -
φράς?)
սակաւակեաց 2.65 — Յոր. ժա. 3, ժդ. 1. *ἐκλογιστῶν*
սահմանադրութիւն 2.77, 3.20 — Գծ. ժէ. 26. *ἐκλογιστῶν*
սաղմոսներգութիւն 2.86 — Բ. եզր. ժ. 24. (*ψαλμωδός*?)
սնտպարծ 3.68 — Գղ. ե. 26. *κενοδοξία*, Ոսկ. մտթ. 219. -ութիւն — *κενοδοξία*
սննդակից 3.43 — Բ. մն. ժ. 8. *συνακτράφεις*. հմմտ. միջին իր. *ham-xvar(ak?)
վերնագիր 1.9 — Ոսկ. գծ., Բրս. Դիող. 1 — PG. 32.621. *ἐκλογιστῶν*, Պիտ.
IX 1, 2.
ցանկասէր 2.54, 88 — Բ. տիմ. գ. 4. *φιλαγδονός*, հմմտ. միջին իր. *kam-
yoz(ak)
քաղցրաբանութիւն 3.65 — հռ. ժդ. 18. *χρηστικός*
քաջահմուտ 2.68 — Ոսկ. մ. բ. 8.
քաջայոյս 1.4 — Ոսկ. ղկ. (*εὐεταπεία*?)
օրինադրեմ 2.7, 22 — Բ. օր. ժէ. 10. *νομοθετέω*

ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐ

- արտահալածեալ 1.24 — Ոսկ. փիլիպ. արտահալած, Պիտ. VI. 2. գ. արտա-
լածեալ
հակամիտել 2.75 — Ոսկ. հռ.
համաբնակ 3.34 — Ոսկ. գծ. (*σύννοχος*?)
համամիտ 3.68 — ա. պետ. 3.8. *ὁμόφρων*

համանուն 2.53, 65—ծ.ա. քր., Թրակ. քեր. 17. ὁμῶνυμνος (տե՛ս Նոյնանուն)
համատիր 3.37 — Նու. քր. ա.
նախասացիալ 1.31 — Ոսկ.
նախաստեղծ 1.6 — Իմ. է. 1. πρωτοπλαστορ, հմմտ. միջին իր. *max(a)val<
*հին իր. *maxwa-data-
շարագիր 3.52 — Ոսկ. գծ. (συχραγγραφή?)
շարայարեալ 2.75 — Ոսկ.
ստորագիր 2.88 — Ոսկ., Իրեն. առաք. 7 (υπογραφή?)
վերաբանութիւն²⁵ 3.61 — Ոսկ. խշ. վերաբանական (ἀναλογικός?)

2. ԽՈՐԵՆԱՅՈՒՂՆԵՐԻ ԶԵՏՄԵՍՐՈՊՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՄ
ԿԵՐՏՎԱԾ ՀՈՒՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ազգաբանել 1.1, ազգաբանութիւն 1.1, 2, 5 — Բրս. ԿԵ. I. 204 — PG. 31.285, Ածար. Կ. Մ. 204 — PG. 35.1241, Փիլ. իմաստ. 40 — VI. 18.
շեղծագործ, Իրեն. առաք. 15
ախորժակ 1.1, 2.76 — Բրս. թէ չէ պատճառ — PG. 31.340. προαιρεσις, Փիլ. տեսական 10 — IX. 122, Պիտ. ստեպ
ախտակցել 3.68 — Բրս. ԿԵ. III. 196. ախտակից — PG. 31.373. συμπαθής, 206. ախտակցութիւն — PG. 31.221. συμπαθία
ամենազան 3.62 — Ածար., Փիլ. տեսական 13 — IX. 130. παντοίος, Պիտ. IV. 1. ա, X. 3.
ամենապատիկ 2.88 — Ածար. Կ. Մ. 228 — PG. 35.769. παντοίος, Բրս. ԿԵ. I. 204 — PG. 31.285. παντοδακός, Աղեքս., Փիլ., Պիտ., Իրեն. հերձ. 46
ամենասուրբ 3.61 — Բրս. ի Ստեփ., Փիլ. տեսական 15 — IX. 132. πανίερος
ալլազգաբար 1.6 — Բրս. ԿԵ. I. 202. ալլազգ — PG. 35.1287. ἄλλως
անբերութիւն 3.68 — Բրս. մկրտ. 7 — PG. 31.441, Փիլ. իմաստ. 33 — I. 4.
